

«Հայաստանի Հանրապետության Ինտերնետ Կառավարման Համաժողով»

Միջգերատեսչական խմբի նիստի

ք. Երևան

20 փետրվարի 2015թ.

Օրակարգ՝

1. «Հայաստանի Հանրապետության Ինտերնետ կառավարման համաժողով» միջգերատեսչական խմբի աշխատակարգի քննարկում:

2. «Ինտերնետային ցանցում ԱՊՀ անդամ-պետությունների անդրսահմանային վստահության տարածքի ձևավորման հիմնական մոտեցումների» նախագծի քննարկում:

3. Ինտերնետ կառավարման սկզբունքներին համապատասխան առկա խնդիրների քննարկում և ՀՀ կառավարության «Ինտերնետի զարգացմանն ուղղված միջոցառումների ծրագրին հավանություն տալու մասին» արձանագրային որոշման նախագծում ներառելու նպատակով առաջարկությունների ներկայացում:

4. Այլ հարցեր:

Միջգերատեսչական խմբի անդամներից ներկա էին՝

1. Գագիկ Թադևոսյան, ՀՀ տրանսպորտի և կապի նախարարի տեղակալ (խմբի ղեկավար)
2. Շաքե Մեժլումյան, ՀՀ էկոնոմիկայի նախարարություն
3. Արսեն Գաբրիելյան, ԱԱԾ
4. Սամվել Հովսեփյան, ՀՀ ոստիկանություն
5. Հայկ Չոբանյան, ԻՏՁՄ փոխտնօրեն
6. Տիգրան Հարությունյան, «Նոյան տապան հողիինգ» ՍՊԸ
7. Վլադիմիր Սահակյան, ՀՀ Գիտությունների ազգային ակադեմիայի ինֆորմատիկայի և ավտոմատացման պրոբլեմների ինստիտուտ» ՊՈԱԿ

8. Տիգրան Զարգարյան, «Հայաստանի ազգային գրադարան» ՊՈԱԿ

9. Լիանա Դոյդոյան, «Ինֆորմացիայի ազատության կենտրոն» ՀԿ

10. Գագիկ Մակարյան, ՀՀ գործատուների հանրապետական միություն

11. Սամվել Մարտիրոսյան, Տեղեկատվական անվտանգության փորձագետ

12. Գրիգոր Սաղյան, «Ինտերնետ Հանրություն» ՀԿ (քարտուղար):

Նիստին մասնակցում էին նաև ՀՀ տրանսպորտի և կապի նախարարության աշխատակազմի ղեկավար Գագիկ Գրիգորյանը, ՀՀ տրանսպորտի և կապի նախարարության աշխատակազմի կապի և տեղեկատվայնացման վարչության պետ Սուրեն Պետրոսյանը, ՀՀ տրանսպորտի և կապի նախարարության աշխատակազմի կապի և տեղեկատվայնացման բաժնի պետ-վարչության պետի տեղակալ Նորայր Ստեփանյանը, ՀՀ տրանսպորտի և կապի նախարարության աշխատակազմի կապի և տեղեկատվայնացման բաժնի գլխավոր մասնագետ Արման Գալստյանը, Երևան քաղաքի առևտրաարդյունաբերական պալատի գործադիր տնօրեն Կարեն Մարտիրոսյանը, «Ինտերնետ Հանրություն» ՀԿ վարչության անդամ Լիանա Գալստյանը, «Յուքոմ» ՍՊԸ տեղեկատվության անվտանգության բաժնի ղեկավար Կարեն Գասպարյանը, «ԱրմենՏել» ՓԲԸ իրավաբանական տնօրինության բիզնեսի իրավական ապահովման բաժնի իրավախորհրդատու Նարինե Ավագյանը:

Նիստից բացակայում էին միջգերատեսչական խմբի անդամներ Հայաստանի Հանրապետության մարդու իրավունքների պաշտպանի աշխատակազմի իրավական վերլուծության վարչության պետ Լուսինե Սարգսյանը, Հայաստանի Հանրապետության նախագահի աշխատակազմի «Հանրային կապերի և տեղեկատվության կենտրոն» ՊՈԱԿ-ի տնօրենի խորհրդական Հովհաննես Նիկողոսյանը և Երևանի մամուլի ակումբի նախագահ Բորիս Նավասարդյանը՝ հարգելի պատճառներով:

Միջգերատեսչական խմբի ղեկավարը առաջարկեց քննարկել օրակարգը: Օրակարգի վերաբերյալ առաջարկություններ չներկայացվեցին խմբի անդամների կողմից: Միջգերատեսչական խմբի ղեկավարի կողմից օրակարգը դրվեց քվեարկության և օրակարգը ընդունվեց միաձայն՝ բոլոր անդամների կողմ ձայներով:

Քննարկվեց՝

1. «Հայաստանի Հանրապետության ինտերնետ կառավարման համաժողով» միջգերատեսչական խմբի աշխատակարգը:

Հարցի քննարկման ժամանակ Գրիգոր Սաղյանն առաջարկեց աշխատանքային կարգում կատարել մի շարք լրացումներ:

Առաջարկվեց նաև միջգերատեսչական խմբի նիստերի ձայնագրությունները կայքում հրապարակել միայն միջգերատեսչական խմբի համաձայնությամբ:

Մասնակիցներն ընդունեցին ներկայացված առաջարկությունները և առաջարկվեց աշխատակարգը ներկայացնել խմբի ղեկավարի հաստատմանը:

2. «Ինտերնետային ցանցում ԱՊՀ անդամ-պետությունների անդրսահմանային վստահության տարածքի ձևավորման հիմնական մոտեցումների» նախագիծը:

Օրակարգի առաջին հարցի վերաբերյալ ելույթ ունեցան ԻՏՁՄ ներկայացուցիչ Հայկ Չոբանյանը, Սամվել Մարտիրոսյանը, Գրիգոր Սաղյանը: Առաջարկվեց փաստաթուղթը ներկայացնել «ԷԿԵՆԳ» ՓԲԸ-ի քննարկմանը՝ հաշվի առնելով, որ ՀՀ կառավարության 2014 փետրվարի 20-ի «Լիազոր մարմին և օպերատոր ճանաչելու մասին» N 217-Ա որոշման 3-րդ կետի համաձայն «ԷԿԵՆԳ» ՓԲԸ-ին ճանաչել որպես էլեկտրոնային եղանակով տեղեկատվության փաստաթղթավորման ընդհանուր ենթակառուցվածքի Հայաստանի Հանրապետության պետական բաղադրիչի օպերատոր:

3. Ինտերնետ կառավարման սկզբունքներին համապատասխան առկա խնդիրների և ՀՀ կառավարության «Ինտերնետի զարգացմանն ուղղված միջոցառումների ծրագրին հավանություն տալու մասին» արձանագրային որոշման նախագծում ներառելու նպատակով առաջարկությունների ներկայացման հարցը:

Միջգերատեսչական խմբի մի շարք անդամների կողմից ներկայացվեցին կարծիքներ ինտերնետ կառավարման սկզբունքներին առընչվող հարցերի վերաբերյալ:

Միջգերատեսչական խմբի ղեկավարի առաջարկությամբ արձանագրային որոշման նախագծում ներառելու նպատակով առաջարկությունների ներկայացման ժամկետը ընդունվեց մինչև փետրվարի 27-ը:

4. Այլ հարցեր

Սամվել Մարտիրոսյան. Այլ երկրներում Ինտերնետ բովանդակության սահմանափակման հետևանքով ՀՀ-ում նշված սահմանափակումների բացառմանն ուղղված միջոցների մշակում:

Սամվել Հովսեփյան. Ապաքրեականացված վիրավորանքների, անանուն հեղինակների կողմից սոցիալական ցանցերում վիրավորանքների հետ կապված հարցերի քննարկում, միջոցների մշակում այն դեպքում, երբ քրեական հետապնդումը օրենքով նախատեսված չէ: Հարցի քննարկում և հնարավոր միջոցների առաջարկում:


Որոշվեց՝

1.«Հայաստանի Հանրապետության ինտերնետ կառավարման համաժողով» միջգերատեսչական խմբի աշխատակարգի վերաբերյալ ներկայացված առաջարկությունները ներառել փաստաթղթում և ներկայացնել միջգերատեսչական խմբի ղեկավարը հաստատման:

2. «Ինտերնետային ցանցում ԱՊՀ անդամ-պետությունների անդրսահմանային վստահության տարածքի ձևավորման հիմնական մոտեցումների» նախագիծը ներկայացնել «ԷԿԵՆԳ» ՓԲԸ-ի քննարկմանը:


3. Մինչև 2015 թվականի փետրվարի 27-ը առցանց եղանակով առաջարկություններ ներկայացնել քարտուղարություն ՀՀ կառավարության «Ինտերնետի զարգացմանն ուղղված միջոցառումների ծրագրին հավանություն տալու մասին» արձանագրային որոշման նախագծում ներառելու նպատակով:

Նախագահ՝



Գագիկ Թադևոսյան

Քարտուղար՝



Գրիգոր Սաղյան